# ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԵՒ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 4-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 12-րդ տարեդարձին եւ ծննդյան 60-ամյակին:

Միասնական Տերունական աղոթքին հաջորդեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:

Շնորհավորական խոսքերից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու պատգամը բերեց երեկոյի մասնակիցներին:

Հանդիսավոր երեկոն շարունակվեց համերգային ծրագրով, որի սկիզբն ազդարարեց Ալեքսանդր Հարությունյանի «Ձոն Վեհափառին» ստեղծագործությունը: Երեկոյի ընթացքում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երգչախմբի եւ նվագախմբի կատարմամբ հատվածներ հնչեցին Տիգրան Չուխաջյանի, Աշոտ Սաթյանի, Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Արմեն Տիգրանյանի ստեղծագործություններից, հնչեցին շարականներ եւ հոգեւոր երգեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

